

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ



Թե մ ա ն ՝ Ա դ ք ի ա յ ր մ ա ն
բ ա ց ա ս ա կ ա ն
հ ե տ և ա ն ք ն ե ր ը





Նախագծի հեղինակներ՝ Նունե Օսեյան, Աննա Մելիքյան, Գոհարիկ Օսեյան, Հասմիկ Գալստյան
Զուլաքարի Ալվարդ Վարդանյանի անվան թիվ 2 միջն. դպրոցի ԲՏԾՄ բնագավառի ուսուցիչներ

ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Միջառարկայական նախագծային աշխատանք /Տևողությունը 12 շաբաթ

- Կենսաբանություն
- Աշխարհագրություն
- Մաթեմատիկա
- Քիմիա առարկաներից





ՆՊԱՏԱԿ՝

- Նպաստել սովորողների բնապահպանական վարքագծի և մշակույթի ձևավորմանը
- Ձևավորել համատեղ աշխատանք կատարելու հմտություն:
- Խթանել սովորողների մոտ քննադատական մտածողությունը, վերլուծելու և եզրակացություններ անելու կարողությունները:
- Չարգացնել տեղեկատվական և հաղորդակցման տեխնոլոգիաների օգտագործման հմտություններ ու մեդիակարողունակություններ



ՎԵՐՁՆԱՐԴՅՈՒՆՔ՝

- Դրսևորի աղբը տեսակավորելու մշակույթ
- Տիրապետի սննդային թափոններից օրգանական պարարտանյութ ստանալու հմտություններին
- Վերլուծի կլիմայի փոփոխության պատճառներն ու հետևանքները, առաջարկի խնդիրների լուծման ուղիներ
- Հմտորեն կիրառի տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաները և հետևի մեդիագրագիտության կանոններին



Խաչվող հասկացություններ

- **Պատճառ և հետևանք:** Աղբի այրման պատճառով մթնոլորտ արտանետված գազերից առաջացած հետևանքները
- **Էներգիա և նյութ:** Մեր շուրջբոլորը նյութ է կամ էներգիա
- **Անհատական և մշակութային արժեքներ:** Գաղափարների, համոզմունքների, զգացողությունների, մշակութային դրսևորումների արժևորում
- **Կայունություն և փոփոխություն:** Քիմիական նյութերի ազդեցությունը շրջակա

միջավայրի վրա:

Միջառարկայական կապեր

- Մաթեմատիկա, Քիմիա, Աշխարհագրություն, Կենսաբանություն, Հայոց լեզու, Թվային գրագիտություն և համակարգչային գիտություն (ԹԳՀԳ)



ՆԱԽԱԳԾԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶԱՐԳԱՑՈՂ ԿԱՐՈՂՈՒՄԻ ԿԵՆՏՐՈՆՆԵՐ

- Սովորել սովորելու կարողունակություն
- Ինքնաճանաչողական և սոցիալական կարողունակություն
- Լեզվական գրագիտություն և կարողունակություն
- Մշակութային կարողունակություն
- Թվային և մեդիա կարողունակություն



ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՔԱՅԼԵՐԸ

- Նախագծի թեմայի ընտրություն
- Հիմնահարցի ձևակերպում
- Աշխատանքային խմբերի ձևավորում. հիմնախնդրի հիմնավորում
- Հետազոտական հարցերի առաջադրում և աշխատանքի բաշխում
- Խմբերի ինքնուրույն աշխատանք, հետազոտություններ
- Ստացված արդյունքների միջանկյալ քննարկումներ
- Կատարված աշխատանքի արդյունքների ներկայացում
- Անհատների և ամբողջ խմբի աշխատանքի արդյունքների գնահատում
- Անդրադարձ



ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ


- Սահիկաշար, Ֆիլմ
- Բուկլետ
- Տարրաներ՝ թափոնների տեսակավորման համար
- Սենյակային ծաղիկներ՝ երեխաների կողմից աճեցրած
- Ցուցահանդես / թափոններից պատրաստված իրերի

ՆԱԽԱԳԾԻ ԸՆԹԱՑՔԸ



- Ուսուցիչը սովորողների հետ վեր է հանում տարբեր բնապահպանական խնդիրներ, որոնք հանդիսանում են պատճառ կլիմայի փոփոխության (Օրինակ՝ «Աղբի տեսակավորման մշակույթի բացակայությունը մեր համայնքում», «Թափոնների վերամշակման նոր տեխնոլոգիաների և կազմակերպությունների պակասը մեր երկրում», «Աղբի այրման բացասական հետևանքները և դրանց մասին տեղեկատվության պակասը մեր համայնքում», «Երկրի վրա ջերմոցային գազերի ազդեցությունը», «Կլիմայի փոփոխությունը», «Կլիմայի փոփոխության հետևանքները մեր համայնքում» և այլ)
- Սովորողները ընտրում են իրենց կողմից վեր հանված խնդիրներից որևէ մեկը (Մեր օրինակում՝ «Աղբի այրման բացասական հետևանքները») և բաժանվում համապատասխան խմբերի:
- Խմբերի բաժանում՝ *քիմիկներ, աշխարհագետներ, կենսաբաններ, մաթեմատիկներ*
- Ուսուցիչը սովորողներին է տրամադրում հետազոտության ուղղորդող հարցերը, գործողությունների պլանը և առաջարկում կայքեր և գրականություն

ՈՒՂՂՈՐԴՈՂ ՀԱՐՑԵՐ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ



ՔԻՄԻԿՆԵՐ

- Ի՞նչ հետևանքներ է բերում չտեսակավորված աղբի այրումը
 - Ի՞նչ գազեր են անջատվում աղբի այրման ժամանակ
 - Ինչպես կատարել աղբի տեսակավորում
 - Աղբի վերամշակման ի՞նչ տեխնոլոգիաներ կան
- Պատրաստել են սոցիալական հոլովակ**





ԱՇԽԱՐՀԱԳԵՏՆԵՐ

- Որո՞նք են կլիմայի փոփոխության պատճառներն ու հետևանքները
 - Ի՞նչ դերակատարում ունեն ջերմոցային գազերը Երկրի համար
 - Ինչպե՞ս մեղմել կլիմայի փոփոխությունը
 - Ինչպե՞ս դիմակայել ու հարմարվել կլիմայի փոփոխությանը
- Պատրաստել են իրազեկող բուկլետներ ու տարածել համայնքում**



ԿԵՆՍԱԲԱՆՆԵՐ



- Ինչպ՞ս օրգանական թափոններից պատրաստել պարարտանյութեր
- Ինչպես են թափոններն ազդում էկոհամակարգերի վրա, իրավիճակը Հայաստանում
- Ինչպե՞ս իրթանել սենյակային բույսերի աճին
- Ինչպե՞ս նոր կյանք տալ թափոններին

Աճեցրել են սենյակային բույսեր օգտագործելով իրենց պատրաստած օրգանական պարարտանյութը





ՄԱՌԵՄԱՏԻԿՆԵՐ

- Ի՞նչ թափոններից կարելի է պատրաստել օգտագործման պիտանի իրեր
- Ինչպե՞ս թափոններից պատրաստել տարբեր ձևի ու չափի տարրաներ
- Ինչպե՞ս տարեկան կտրվածքով հաշվել համայնքից հանված աղբի մոտավոր քանակը:
- Ինչպե՞ս հաշվել թափոնից պատրաստած իրերի ու անեցրած ծաղիկների վաճառքի ինքնարժեքը՝ ցուցահանդես վաճառքի համար:







ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐՋՆԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՏԵՍԱԿՆԵՐ

- Սահիկաշար կամ ֆիլմ
- Բուկլետներ
- Թափոնների տեսակավորման տարրաներ
- Մենյակային ծաղիկներ՝ երեխաների կողմից անեցրած
- Թափոնից պատրաստված իրեր, ցուցահանդես –վաճառքի համար

ԵՐԿՐՈՐԴ ԿՅԱՆՔ ԹԱՓՈՆՆԵՐԻՆ



ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ



Դրվագներ

- <https://bit.ly/2WUH7W1> /ֆիլմ/
- <https://drive.google.com/file/d/1ZpZv-1fsvuMqGS4GGzgvn-efXuikoXTc/view?usp=sharing>
- https://drive.google.com/file/d/1_dkJCDFCPg2wbICZQAT3AmrgqChr0-Y3/view?usp=sharing
- <https://drive.google.com/file/d/1ZqcnDsvkIGrvCGHfirXaRm4GSvXpReEw/view?usp=sharing>



ԱՆԴՐԱԴԱՐՁ





ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿԸ

- «Կլիմայական արկղիկ» ուսումնական ձեռնարկ
- Թափոնների մասին համառոտ /ձեռնարկ աշակերտների համար/
- Թափոնների կառավարում
- Կլիմայի փոփոխություն կրթության կազմակերպում
- Կլիմայի փոփոխության ուսումնական ձեռնարկ
- Մեդիագրագիտության ձեռնարկներ
- Մեր բարեկամ կոմպոստը
- <https://escs.am/files/files/2022-12-08/bfcd4cd696c28aae0a9008fa8bb598f1.pdf>
- <https://escs.am/files/files/2022-12-08/62ab62086d6d212087715bf25abf5440.pdf>
- <https://escs.am/files/files/2022-12-08/4c3316ce59896c98e2ae39bbb6569363.pdf>
- <https://www.nature-ic.am/hy/publication/Climate-Box-educational-manual/1272>
- <https://media.am/hy/medialiteracy/2021/05/25/27944/>
- www.youtube.com/watch?v=m2JRW8rv6zg Ֆիլմ
- <https://www.youtube.com/watch?v=lmvfp7wDzNU> Ֆիլմ

ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

- ❑ Իրականացվել է ԿԶՆԱԿ հիմնադրամի կրթական նորարարություններ բաժնի կողմից իրականացվող «Մեդիագրագիտությունը՝ որպես արդյունավետ դասավանդման և ուսումնառության կարողունակություն» նախագծի շրջանակներում:

